

ՂԱԿԻԹ ԱՓԻՆՅԱՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
 ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՆԱԿԹԱՆՈՂՈՎԱԿԱՅԻՆ
 ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈՒ 1991-1994ԹԹ.

Հարավկովկասյան տարածաշրջանում և հատկապես Կասպյան հատվածում Ադրբեջանի Հանրապետությունը բավականին ազդեցիկ դերակատարություն ունի, որը գլխավորապես պայմանավորված է ինչպես նրա բարենպաստ աշխարհագրական դիրքով, այդպես էլ ածխաջրածնային հարստությունների առատությամբ: Ինչպես հայտնի է, Հարավային Կովկասում, «Ադրբեջան» ինքնանվանը պետություն, աշխարհի քաղաքական քարտեզում առաջին անգամ հայտնվեց 1918թ. մայիսին: Իսկ մինչ կայսերական Ռուսաստանի մաս կազմելը, այն հիմնականում բնակեցված էր իրանական և քյուրքական ծագմամբ ցեղերով, որոնք միավորված էին մեկ տասնյակից ավել խանություններում, և միայն հյուսիսային հարևանի կողմից նվաճվելուց հետո այն աստիճանաբար սկսեց ընկալվել որպես միասնական տարածքային կազմավորում:

1921թ. Մոսկվայում կնքված ռուս-թուրքական անարդարացի պայմանագրի արդյունքում, Խորհրդային Ադրբեջանի մաս դարձած պատմական հայկական ու հայաբնակ Ղարաբաղն ու Նախիջևանը հիրավի նախագծեցին հարավկովկասյան անհանգստությունների օջախներից մեկը:

1991թ. սեփական անկախության հռչակումից հետո, Ադրբեջանը ճաշակեց իր իսկ կողմի սերմանած անհանդուրժողականության մթնոլորտի և չհիմնավորված ամբիցիաների հետևանքները:

1990թ. աշնանը, Ադրբեջանի Գերագույն Խորհուրդը, երկրի նախագահ է ընտրում Ա. Մութալիբովին: Մոսկվան իր աջակցությունը հայտնեց վերջինիս՝ նախ և առաջ ելնելով այն կանխադրյալից, որ նա, ի տարբերություն Հայաստանի և Վրաստանի լիդերների, զսպվածություն էր հանդես բերում հակախորհրդային կոչերում: 1991թ. օգոստոսին Մոսկվայում տեղի ունեցած հայտնի իրադարձությունները արմատապես փոխեցին պատմության ընթացքը ողջ Խորհրդային Միությունում և բացասաբար ազդեցին խռովարարներին անուղղակի աջակցություն հայտնած Մութալիբովի հետագա քաղաքական կարիերայի վրա: Սակայն Մութալիբովին վերջնական հարված հասցրեց հայկական ստորաբաժանումների խռչոր հաջողությունները: Ստեղծված իրավի-

ճակում, 1992թ. զարմանք, Այսպիսով Սուբսիդիաները ստիպված էր հետաճանալ իշխանությունից և ապաստանել Մոսկվայում 1992թ. հունիսին, նախագահ դարձավ Ադրբեջանի Ազգային ճակատի ղեկավար, իր հայազգեներով ազգայնական Ա. Էլչիրեյը: Վերջինիս քաղաքական գաղափարախոսությունը կրում էր արտահայտված պանթուրքիզմի տարրեր և խարսխվում էր թուրքական արևելման վրա: Ինչպես և լինում է նման պայմաններում, Էլչիրեյը իր բանակի անհաջողությունները պատճառները սկսեց փնտրել դրսում և վճռականորեն հանդես եկավ Ռուսաստանից հեռանալու օգտին, որի արդյունքներից եղավ ԱՊԳ-ին Ադրբեջանի անդամակցության մերժումն ու ռուսական զորքերի դուրս բերման պահանջը հանրապետության տարածքից:

Աե՛ծ հաշվով Էլչիրեյին չհաջողվեց շտկել իրավիճակը ռազմաճակատում և կայունացնել սոցիալ-տնտեսական կացությունը երկրում, ինչը 1993թ. ոչ առանց արտաքին ուժերի միջամտության, հանգեցրեց ռազմական հեղաշրջման: Դրա արդյունքում իշխանության եկավ Գ. Ալիևը: Վերջինս հաջողվեց կայունացնել ներքին իրավիճակը, ճնշել երկրի հարավում զնդապետ Ս. Դուբաթովի գլխավորությամբ սկիզբ առած թալիշների հուզումները, և կանխել լեզգիների զանգվածային ելույթները: Նա որոշակի շտկումների ենթարկեց նաև երկրի արտաքին քաղաքական կուրսը, որի արդյունքում Ադրբեջանը դարձավ ԱՊԳ անդամ, ինչպես նաև վարձակալությամբ Ռուսաստանին հանձնվեց Գաբալայի ռադիոտեղորոշման կայանը: Ադրբեջանական հասարակության ճընշող մեծամասնության կարծիքով, նախագահ Ալիևի հիմնական ծառայությունները կայանում են հասարակական, քաղաքական կայունության նվաճման և պահպանման մեջ: Նրան հաջողվեց լիովին չեզոքացնել զինված ընդդիմությանը և իրեն ենթարկել չափազանց քաղաքականացված իրավապահ մարմիններին:

Այսպիսով, Կասպից ծովի ավազանում և Կենտրոնական Ասիայում, քաղաքական և տնտեսական ազդեցության հաստատման և վերաբաշխման տեսակետից, հարավկովկասյան տարածաշրջանն աշխարհաքաղաքական հատուկ կարևորություն ստացավ, քանզի վերջինիս աշխարհագրական դիրքը ճակատագրական դարձավ այն որոշման համար, թե ով է ստանձնելու Կասպյան ավազանից նավթի հոսքի վերահսկումը և ինչ ճանապարհով է այն հասնելու արևմուտքին: Մոսկվան, ելնելով իր տնտեսական և ռազմավարական շահերից, առաջարկում էր ռուսական ճանապարհը, սակայն Արևմուտքն էլ ետխորհրդային դարաշրջանում ռուսական ազդեցությունը սահմանափակելու այլընտրանք էր փնտրում:

ԻԱՊԳ-ի ապակառուցողական ազգային քաղաքականության արդյունքում, վերջինիս ինքնավիուզումից հետո, Զարավայի Կովկասում սկիզբ առած ազգամիջյան պատերազմներն արագությամբ վերածվեցին տարածաշրջանում

իրենց աշխարհաքաղաքական շահերը հետապնդող տերությունների ներթափանցման և ճնշման մեխանիզմի:

Ամենևին էլ չէրկրորդելով հարավկովկասյան տարածաշրջանում ազգամիջյան պատերազմների բռնկման ազգային-ազատագրական բովանդակությունը, ստիպված ենք շեշտադրում անել վերոհիշյալի՝ աշխարհաքաղաքական ասպեկտների վրա: Եվ պարզամտություն կլիներ այդ աշխարհաքաղաքական վերլուծության առանցքը չկառուցել Հարավային Կովկասում ու նրանում առկա էներգակիրների և նրա միջով անցնող և տեսանելի ապագայում անցնելիք առաքման ուղիների համար տերությունների միջև ծավալված սուր մրցապայքարի շուրջ:

Հարավկովկասյան պատերազմների ընթացքն ու ժամանակագրությունն արժանագրած միջազգային պարբերական մամուլի և դիվանագիտական գրագրության ենթատողերում կարելի է նկատել, որ արևահեղության կանխման կոչերի ետևում ուղղակի կամ էլ անուղղակի նշարվում է էներգակիրների ու նրանց առաքման հիմնախնդիրներին առնչվող արժարժույթները: Ընդհանրապես, նորագույն շրջանում, հարավկովկասյան տարածաշրջանին պատուհասած բոլոր ազգամիջյան պատերազմներից, էներգակիրների հիմնախնդիրներին առավել սերտ առնչություններ ունեն հայ-ադրբեջանական հակամարտությունը: Վրաց - աբխազական և վրաց-հարավօսական հակամարտությունները էներգակիրների հիմնախնդիրին անուղղակի առնչություն ունենին, քանզի Վրաստանի տարածքը հիմնականում ընկալվում էր հնարավոր տարանցիկության տեսանկյունից:

Հիշատակենք, որ արևմտյան նավթային ընկերությունները, ի դեմս Բրիթիշ Փեթրոլիումի, ադրբեջանական ածխաջրածնային հարստությունների նկատմամբ հետաքրքրություն դրսևորեցին դեռևս 1990թ-ին, իսկ 1991թ-ին, մինչև ինքնավիճակումը, Բաքում իրենց այցելությամբ պատվեցին ամերիկյան նավթագազային «Ամակո» ընկերության ներկայացուցիչները: Բաքվին պատկանող Կասպիցի ծանծաղուտային գոտում նավթահորատման աշխատանքներ ծավալելու վերաբերյալ բանակցությունները, դեռևս ինքնուրույն շրջանում, արևմտյան ընկերությունների հետ սկսեց Ադրբեջանի կենտրոնի առաջին քարտուղար Ա. Մուֆալիբովը, որի պրոռուսական դիրքորոշման պատճառով արևմտյան ընկերություններին չհաջողվեց հասնել ցանկալիին և բանակցությունները շուտով հայտնվեցին փակուղում:

Սակայն 1991թ. աժոհանը Բաքվում, ամերիկյան «Ամակո» ընկերության գլխավորությամբ և նախաձեռնությամբ սկսեց կազմավորվել նավթային կոնսորցիումը, որին կարճ ժամանակ անց իրենց մասնակցությունը բերեցին ևս մի քանի ամերիկյան, ինչպես նաև նորվեգական, թուրքական ընկերություններ:

Վերջիններիս մեծապես հետաքրքրված էին կասպիական «Գյունեշլի», «Ազերի», «Զիրադ» ինչպես նաև «Շահ-դենիզ» հանքավայրերով: Բանակցությունները տարվում էին միայն առաջին երեք նավթահանքերի վերաբերյալ, իսկ «Շահ-դենիզը», համաձայն աղբյուրների, «ամրագրված» էր ռուսական ընկերությունների համար, որի նպատակն էր՝ Ղարաբաղյան հարցի վերաբերյալ զիջումներ կորզել ի շահ Ադրբեջանի:¹ Սակայն շուտով Ա. Սուբալիբովը հեռացվեց իշխանությունից, իսկ բանակցային գործընթացն էլ հայտնվեց փակուղում: Ազատ տնտեսական գործունեության վերաբերյալ արևմտյան ընկերություններին տրված հստակ երաշխիքներից հետո, իշխանության եկած Ադրբեջանի Ազգային ճակատ կուսակցությունն Ա. Էլչիբեյի գլխավորությամբ, կարողացան վերսկսել բանակցությունները Բրիթիշ Փետրոլիումի և այդ ընթացքում նրան միացած ամերիկյան և նորվեգական ընկերությունների հետ: Այսպիսով, հենց 1992թ. օգոստոսից նավթային ծրագրերին զուգընթաց ակտուալացվում էր նաև ապագա խողովակային տրանսպորտի երթուղին: Նավթային ընկերակցության արևմտյան անդամներն ի սկզբանե առաջարկում էին օգտագործել Թուրքիայի տարածքը, իսկ այնտեղ հասնելու ուղին առաջարկվում էր հայկական, վրացական, իրանական և նույնիսկ ռուսական ճանապարհները: Առաջումների համար Թուրքիայի տարածքի օգտագործման դեմ անմիջապես հանդես եկավ Ռուսաստանի Դաշնությունը, որն առաջարկում էր օգտագործել նվազ ծախսատար Բաքու-Նովոռոսիյսկ նավթխողովակը: Ռուսական հիշյալ առաջարկին ընդդիմացան Ադրբեջանն ու նրան աջակից արևմտյան կորպորացիաները, որոնք չէին ցանկանում նավթահոսքի փաստացի վերահսկողությունը հանձնել Ռուսաստանին:

Ռուսական առաջարկի մերժումը պայմանավորված էր ոչ միայն նավթահոսքի վերահսկման արդյունքում հնարավոր քաղաքական շահաբաժինը հյուսիսային գերտերությանը տրամադրելու մտավախությամբ, այլ նաև նրանով, որ Բաքու-Նովոռոսիյսկ նավթխողովակի 150 կիլոմետրանոց հատվածն անցնում էր Չեչենիայի տարածքով և բարձրացնում էր անվտանգության ռիսկի գործակիցը:

Վերը նշած քննարկումներում, սակայն հիպոթետիկ աստիճանում, տեղ էր գտել նաև Իրանի տարածքով նավթափոխադրումներ իրականացնելու խնդիրը, որի դեմ կտրականապես հանդես եկավ ինչպես Նավթային ընկերակցությունում առաջին ջութակի գործառույթ իրականացնող ԱՄՆ-ը, այդպես էլ նրա մյուս մասնակից-անդամները:

Հատկանշական է, որ խողովակաշարի շինարարության քննարկումներին զուգընթաց խարհրդակցություններ ծավալվեցին Հայաստանի և

¹ «Независимая газета», 6 апреля 1996г.

Աղբբեջանի միջև հայկական տարածքների փոխանակման վերաբերյալ, որն առավել հայտնի է Պոլ Չոբլի նախագիծ անվանմամբ: Սակայն ինչպես հայտնի է Ռուսաստանի և հատկապես Հայաստանի կոշտ դիրքորոշումը վիժեցրեց այդ նախագծի կյանքի կոչելը: Սակայն ռուսական իշխանությունները բոլոր հնարավոր միջոցներով Աղբբեջանին հասկանալ էին տալի, որ անհրաժեշտ է հարգել ու հաշվի առնել Ռուսաստանի ազգային շահերը, բայց էլ չիբեյի, իր բնությով նեոնուսաֆաթական կառավարությունը շարունակում էր անտեսել այդ հանգամանքը:

Հակառուսական մարտավարության պատասխանն իրեն երկար սպասել չտվեց: 1993թ. փետրվարին Գյանջայում տեղի ունեցան հակաէլչիբեյան հուզումներ, որին, համաձայն որոշ լրատվամիջոցների, իրենց գործուն մասնակցությունն ունեցան նաև այնտեղ տեղակայված ռուսական զնդի դեսանտայինները:

Պետք է նշել, որ Կրեմլը չէր վարանում իր ազդեցությունն ու ներկայությունը պահպանելու նպատակով օգտագործել նորանկախ հանրապետություններում առկա պատերազմական իրավիճակը:

Դեռևս 1992թ-ին Աղբբեջանի և Վրաստանի միջև պայմանագիր կնքվեց Բաքու – Փոթի խողովակաշարի կառուցման վերաբերյալ, որում Աղբբեջանը նավթային ընկերակցությանն առաջարկում էր նավթավաճառքի մասնաբաժինների՝ 75%/ 25% հարաբերակցությունը:² Աղբբեջանն այս տարբերակով ցանկանում էր ոչ միայն սեփական բյուջեն արագորեն համալրել նավթադոլարներով, այլ նաև օտարերկրյա ընկերություններից ներքաշելով հիշյալ նախագիծ՝ արևմտյան շահագրգիռ տերությունների աջակցությունը ստանալ հայ-աղբբեջանական հակամարտությունում:

Նշենք նաև, որ արևմտյան ընկերությունները մեծագույն զգուշությամբ էին վերաբերում աղբբեջանական առաջարկներին, քանզի ողջ հարավկովկասյան տարածաշրջանը նրանք համարում էին տնտեսական և քաղաքական բարձր ռիսկի գոտի: Նրանց մտավախություններն ամենակն էլ հիմնազուրկ չէին հատկապես Աղբբեջանի ներքին անկայունության վերաբերյալ, որը փաստագրվեց 1993թ հունիսի 15-ին Ս. Հունսեյնովի զլխավորած ապստամբական շարժման կողմից էլչիբեյին իշխանությունից հեռացմամբ:

Հեղաշրջման արդյունքում իշխանության եկած Հ. Ալիևը կտրուկ շրջադարձ կատարեց իր նախորդների քաղաքական և տնտեսական կուրսից: Նավթային ընկերակցության հետ ձեռ բերված բոլոր նախկին պայմանավորվածությունները հայտարարվեցին հակաազգային և չեղյալ, իսկ բուն

² Ивашов И. Транскаспийские игры. Москва 2005. с. 105.

բանակցությունները ընդհատվեցին անորոշ ժամանակով: Այս ամենը, որոշ հետազոտողների հիմք տվեց կարծելու, որ ռուսական հետաքրքրություններն անտեսելու պատճառով, էլչիբեյը, Ռուսաստանի աջակցությամբ փոխարինվեց առավել լոյալ տրամադրված Զ. Ալիևով:³

Կարծում ենք, որ անլրջություն կլիներ անվերապահորեն ընդունել հիշյալ վարկածը, սակայն համարել այն հիմնազուրկ նույնպես լրջմիտ չէ: Մեր համոզմունքները հիմնված են միայն անկողմնակալ տրամաբանության և բաց աղբյուրների տողատակերից նշմարվող տեղեկությունների վրա, որը սակայն ստիպված է գոյակցելու վարկածի աստիճանում, քանզի նմանատիպ իրողությունները հաստատող փաստաթղթերը շարքային հետազոտողի համար դեռ երկար տարիներ կմնան անհասանելի:

Անդրադառնալով ընդհատված բանակցային գործընթացին նշենք, որ Զ. Ալիև չէր կարող երկար ժամանակ անգործության մատնել Բաքվի հիմնական խաղաքարտը և վերջապես 1993թ. սեպտեմբերին Սիջազգային նավթային ընկերակցությանը հասկանալ տվեց, որ պատրաստ է վերսկսելու քննարկումները վեբջիններիս հետ: Պայմանագիրը ստորագրվեց նոյեմբերի 2-ին՝ հետևյալ մասնակիցներով և մասնաբաժիններով համապատասխան՝ անգլիական «BP» և նորվեգական «Statoil» - 36,7%, քրթական «Botash» - 6%:⁴ Համաձայն աղբյուրների շուտով Բաքու ժամանեց նավթարդյունաբերական սարքավորումներ արտադրող ամերիկյան «FMC» ընկերության ներկայացուցիչները, որոնք ի հետամուտ կորպորատիվ հետաքրքրությունների, պահանջներ ներկայացրեցին Ղարաբաղում պատերազմի դադարեցման օգտին:⁵

Այս հայտարարությունը կարևորվում է այնքանով, որ այն արտահայտում էր միջազգային գործարար շրջանակների մտահոգությունը տարածաշրջանում առկա անհանգստությունների վերաբերյալ, որոնք ուղղակիորեն բարձրացնում էին կապիտալ ներդրումների ռիսկերը՝ այստեղից բխող անցանկալի հետևանքներով հանդերձ: Սակայն շուտող Ղարաբաղա-ադրբեջանական ճակատում արծանագրված հայկական զենքի տպավորիչ հաջողությունները, վերլուծաբաններին ստիպեցին կարծիք հայտնել, որ այդ, ոչ այլ ինչ է, քան ռուսական անտեսված շահերի արծագանք:⁶

Կարծում ենք, որ հայ-ադրբեջանական հակամարտությունում ռուսական գործոնի անտեսումն այնքան էլ տրամաբանված չէ, սակայն նսեմացնել և

³ Լույն տեղում, էջ՝ 108

⁴ Деньги и кредит. 1997. N 1

⁵ Լույն տեղում

⁶ Кожунбеков М. Геополитика России. Москва 2000. с. 195

միայն ռուսական քաղաքական ամբիցիաների հետ կապել պանծալի հայ գինվորի տարած հաղթանակները՝ մեղմ ասաց հիմնագուրկ են և անընդունելի:

Սակայն ռուսական կողմից, որպես վերոհիշյալի արծագանք, կարծում ենք, անխոս կարելի էր համարել Ռուսաստանի Դաշնության արտգործնախարարության հայտարարությունը Կասպից ծովի կարգավիճակի վերաբերյալ: Ռուսական կողմը պնդում էր և պնդում է առ այսօր, որ Կասպիցը՝ գիտական ընկալմամբ լիճ է, այլ ոչ թե ծով և որի նկատմամբ կիրառելի չեն ծովի կարգավիճակին հատուկ մերձափնյա մղոմային գոտիների սկզբունքը, որով էլ կասկածի էր առնում Ադրբեջանի կողմից Կասպիցի ավազանում արդյունահանված նավթի օրինակառությունը:⁷

1993թ. պետական մասնաբաժնով գոծող ռուսական «ԼՈՒԿՕիլ» «մասնավոր» ընկերությունը լծվեց գործի՝ ադրբեջանական տնտեսություն ներթափանցելու համար և շուտով 1994թ. Բաքվի նաթանշակման գործարանը ռուսական հում նավթի ռեքսպորտի հնարավորություն ստացավ՝ տարեկան 10,6մլն. տ. չափաբաժնով: Իսկ ռուսական «ԼՈՒԿՕիլ» ընկերությունը, նույն թվականին, 10% բաժնեմաս ստացավ «Ազերի» և «Չիրազ» հանքատեղերում, որով նա իր մասնակցությունը պիտի ունենար Միջազգային նավթային ընկերակցությունում:

Իսկ մինչ այդ, 1993թ, հայկական ստորաբաժանումների առաջխաղացումը Ջանգելանի և Ֆիզուլիի ուղղություններում՝ կաթվացահար արեց Չայաստանով՝ Նախիջևան, այնտեղից էլ Թուրքիա՝ նավթախողովակի հնարավոր կառուցման նավթային ընկերակցության նախնական ծրագրերը:

Ըննադատել Ռուսաստանին այս քաղաքականության համար, կարծում ենք օբյեկտիվ չէ, քանզի նա վարվում է այնպես, ինչպես կվարվեր ցանկացած գերտերություն, որի կենսական հիմնախնդիրներից է պահպանել իր նախկին աշխարհաքաղաքական միջավայրը: Ահա սրանով է բացատրվում այն հանգամանքը, որ Ռուսաստանը մեծագույն խանդով է վերաբերվում տարածաշրջանով հետաքրքրված ցանկացած ուժի նկատմամբ և ձգտում է հակադարձել իր հետաքրքրությունները շրջանցող ցանկացած նախագծի իրականացմանը: Եվ այս տեսակետից, որոշակի վստահությամբ կարելի է ենթադրել, որ հարավկովկասյան լոկալ հակամարտությունները արտահայտում էին Ռուսաստանի ռազմավարական շահերը, քանզի դա խոչնդոտում էր կասպյան և անդրկասպյան նավթային նախագծերի լիիրավ իրականացմանը:

⁷ Федоров Ю. Правовой статус Каспийского моря. Москва 1996. с. 13